ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հուլիսի 29-ից 30-ը Վրաստան (Թբիլիսի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Վահան Քերոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝
Վրաստան (Թբիլիսի), հուլիսի 29-ից 30-ը

4. Հրավիրող կողմը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Վահան Քերոբյանի գլխավորած պատվիրակության այցը Վրաստան նախաձեռնվել է հայկական կողմից՝ դիվանագիտական կապուղիներով ձեռք է բերվել պայմանավորվածություն այցը ս.թ. հուլիսի 29-ից 30-ը կազմակերպելու վերաբերյալ:

5. Գործուղման նպատակը՝

Առևտրատնտեսական ոլորտին առնչվող հայ-վրացական երկկողմ համագործակցության ընդլայնման հնարավորությունները քննարկելու նպատակով

6. Քննարկված թեմաները՝

- ՀՀ-Վրաստան տնտեսական համագործակցության առկա իրավիճակ և հեռանկարներ,
- Տարածաշրջանային համագործակցություն,
- Երևան – Թբիլիսի արագընթաց գնացքի ներդրումային ծրագիր,
- Վրաստանի տարածքով տարանցիկ փոխադրումների հետ կապված խնդիրներ,
- ՊՄԳ կիրառում և փորձի փոխանակում, մասնավորապես ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2021թ. հուլիսի 29-ին կայացած Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Նաթելա Տուրնավայի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու երկրների կառավարությունների կողմից ձեռնարկած քայլերը՝ Հայաստանի և

Վրաստանի տնտեսությունների վրա COVID-19 հետևանքների մեղմելու ուղղությամբ, քննարկվեցին առևտրատնտեսական ոլորտին առնչվող տարբեր հարցեր, մասնավորապես, հաշվի առնելով ԵԱՏՄ կողմից նախատեսվող՝ 3-րդ երկրներից ներմուծվող գինիների և կոնյակի սպիրտի համար տուրքի բարձրացումը, ձևավորել միասնական մոտեցում՝ Եվրասիկան շուկայում հայկական և վրացական գինու և կոնյակի ներկայացվածության ավելացման ուղղությամբ: Այդ կապակցությամբ բարձրացվեց՝ հայկական արտադրանքի Վրաստանի տարածքով տարանցիկ բեռնափոխադրումների ընթացքում ծագող խոչընդոտների և դրանց վերացման ուղիների վերաբերյալ հարցը:

Վրաց գործընկերոջն առաջարկվեց դիտարկել վրացական ընկերությունների և ֆինանսական կառույցների՝ Հայաստանում տարբեր ներդրումային ծրագրերում՝ այդ թվում ենթակառուցվածքային, մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, արևային էներգետիկայի ոլորտներում մասնակցության հնարավորությունը: Միաժամանակ խոսվեց Գյումրիում «Չոր նավահանգիստ» (Dry Port) վրացական ընկերությունների մասնակցության՝ իրենց արտադրանքը երրորդ երկրներ արտահանելու հեռանկարների մասին:

Տիկին Տուրնավան տեղեկացվեց Երևան-Գյումրի-Թբիլիսի արագընթաց երկաթգծի կառուցման ծրագրի և դրա շուրջ Ասիական զարգացման բանկի հետ ընթացող բանակցությունների վերաբերյալ: Երկուստեք ողջունելով նման ծրագրի իրականացումը, ինչը հնարավորություն կընձեռի կրճատել Երևանից-Թբիլիսի ուղևորության ժամանակը 9-ը ժամից նիչև 2-2,5 ժամ, կնպաստի գործարարների և զբոսաշրջիկների հոսքերի կտրուկ ավելացմանը, ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ մոտակա երկու շաբաթվա ընթացքում կազմակերպել եռակողմ հանդիպում (տեսակապի ձևաչափով) Հայաստանի էկոնոմիկայի նախարարի, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի և Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների միջև՝ քննարկելու ծրագրի իրականացման հետ մանրամասները և դրանց իրականացման համար հետագա քայլերը:

Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարն առաջարկեց ակտիվացնել համագործակցությունը Հայաստանի և վրաստանի տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում: Կողմերը ընդգծեցին այդ հարթակի կարևորությունը երկկողմ առևտրատնեսական համագոծակցության զարգացման գործընթացում և հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ ձևավորել հերթական նիստի օրակարգը և հետևողականորեն հետամուտ լինել հանձնաժողովի որոշումների իրականացմանը: (Հերթական՝ 11-րդ նիստը նախատեսվում է գումարել 2021թ. դեկտեմբերին Թբիլիսիում):

Վրացական կողմն իր մտահոգությունը հայտնեց առ այն որ ՀՀ տեղեկատվական կապի օպերատորները՝ մասնավորապես «Ռեոստելեկոմ» և «Յուքոմ» ընկերությունները, ծառայություններ մատուցելիս, ներկայացնում են Աբխազիան և Օսետիան որպես առանձին պետություններ:

Նույն օրը կայացավ Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլիի հետ հանդիպումը: Քննարկվեց Երևան-Գյումրի-Թբիլիսի արագընթաց երկաթգծի կառուցման ծրագրի և դրա շուրջ Ասիական զարգացման բանկի հետ ընթացող բանակցությունների վերաբերյալ: Պրն. Լ.Խուցիշվիլին ողջունեց նման ծրագրի իրականացումը, ինչը հնարավորություն կընձեռի կրճատել Երևանից-Թբիլիսի ուղևորության ժամանակը 9-ը ժամից նիչև 2-2,5 ժամ, և կարծիք հայտնեց, որ այդ ծրագիրը կնպաստի երկու երկրների գործարարների և զբոսաշրջիկների հոսքերի ավելացմանը, ինչն իր հերթին դրական ազդեցություն կունենա մեր երկրների տնտեսության վրա:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև հայկական արտադրանքի Վրաստանի տարածքով տարանցիկ բեռնափոխադրումների ժամանակ ծագող խոչընդոտների և դրանց վերացման ուղիների մասին: Նման խնդիրները քննարկելու և լուծումներ առաջարկելու նպատակով, ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ ձևավորել համատեղ աշխատանքային խումբ, որի կազմում վրացական կողմից կլինեն Վրաստանի եկամուտների ծառայության գլխավոր տնօրենի տեղակալ Վլադիմեր Խունդաձեն և Վրաստանի գինու ազգային գործակալության տնօրեն Լևան Մեխլուզան, հայկական կողմից՝ Հայաստանի ՊԵԿ նախագահի տեղակալ և խաղողագործության և գինեգործության հիմնադրամի տնօրեն Զ.Մուրադյանը:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարար Իրակլի Քարսելաձեի հետ ս.թ. հուլիսի 30-ին կայացած հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու երկրներում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերը, մասնավորապես ավտոճանապարհաշինության ոլորտում: Կողմերը գոհունակությամբ նշեցին Բագրատաշենի նոր կամրջի կառուցման աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Խոսվեց Մեղրի-Բաթումի ճանապարհի Վրաստանի տարածքում ընդլայնման հնարավորությունների մասին: Վրաց նախարարը տեղեկացրեց, որ ելնելով ռելիեֆի յուրահատկությունից՝ անհնարին է լայնացնել ճանապարհը, սակայն այդ հատվածը գտնվում է իշխանությունների հատուկ ուշադրության կենտրոնում և մշտապես իրականացվում են վերանորոգման աշխատանքներ: Խոսվեց Հայաստանի տարածքում նախատեսվող բազմաթիվ ենթակառուցվածքային՝ այդ թվում ավտոճանապարհաշինական, ջրամբարաշինական, կրթական հաստատությունների կառուցման ծրագրերի և դրանցում՝ վրացական ընկերությունների մասնակցության հնարավորության մասին:

Նույն օրը կայացավ Վրաստանի փոխվարչապետ-բնապահպանության և գյուղատնտեսության նախարար Լևան Դավիթաշվիլի հետ հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվեց ԵԱՏՄ կողմից նախատեսվող՝ 3-րդ երկրներից ներմուծվող գինիների և կոնյակի սպիրտի համար տուրքի բարձրացումը, և առաջարկվեց ձևավորել միասնական մոտեցում՝ Եվրասիական շուկայում հայկական և վրացական գինու և կոնյակի ներկայացվածության ավելացման ուղղությամբ: Այդ կապակցությամբ բարձրացվեց՝ հայկական արտադրանքի Վրաստանի տարածքով տարանցիկ բեռնափոխադրումների ընթացքում ծագող խոչընդոտների և դրանց վերացման ուղիների վերաբերյալ հարցը: Նախարար Դավիթաշվիլին ողջունեց՝ տարանցիկ փոխադրումների ընթացքում ծագած խնդիրները կարգավորող համատեղ

աշխատանքային խմբի ստեղծումը և դրա կազմում գինու ազգային գործակալության տնօրեն Լևան Մեխլուզան ընդգրկելը: Վրաց փոխվարչապետը հետաքրքրություն ցուցաբերեց Երևան-Թբիլիսի նոր արագընթաց երկաթգծի ծրագրի վերաբերյալ, ընդգծելով դրա կարևորությունը տարածաշրջանային, մասնավորապես գինու զբոսաշրջության զարգացման համար այդ ծրագրի դրական դերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

04.08.2021թ.